ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱՅՈՒՄ

Արաքս Փաշայան

Սաուդյան Արաբիայի Թագավորությունն (ՍԱԹ) այն բացառիկ իսլամական պետություններից է, որտեղ կրոնական և քաղաքական կառույցներն ու ինստիտուտները սերտաճած են: Սաուդյան Արաբիան թե՛ արաբական և թե՛ իսլամական ինքնության կրող է, սակայն հասարակական գիտակցությունը հիմնականում պայմանավորված է իսլամով[1]:

Պետական համակարգի հիմքում ընկած է թեոկրատ պետության (կամ աստվածապետության) մոդելը: ՍԱԹ-ում Ղուրանը և մարգարեի սուննան ծառայում են որպես սահմանադրություն, իսկ հասարակության բարոյական, սոցիալական և իրավական կողմերը կարգավորում է շարիաթը: Պետական գաղափարախոսության հիմքում ընկած է վահաբականությունը, որի մասին խոսվում է միայն պատմական և դավանաբանական համատեքստում[2]: Իշխանական համակարգի կենտրոնական դեմքը թագավորն է՝ Ալ Սաուդ ընտանիքից: Թագավորը ղեկավարում է դատական, գործադիր և օրենսդիր ոլորտները: Իշխող ընտրանին երկիրը կառավարում է Աբդ ալ-Վահաբի հետնորդների՝ վահաբական ուլամայի իշխող թևի՝ Ալ Շեյխ ընտանիքի հետ դաշն կնքած: Վահաբականության իսթեբլիշմենթին մեծապես աջակցում է Ներքին գործերի նախարարության շրջանակներում գործող կրոնական ոստիկանական կառույցը՝ Առաքինության պահպանության և անբարոյականության դեմ պայքարի կոմիտեն, որի գործակալները կարող են առանց դա-

[1] Սաուդյան Արաբիայում արաբական ազգային ինքնության հիմնական տարրը իսլամն է, ի տարբերություն այլ արաբական երկրների, որտեղ ազգայնականությունը նաև աշխարհիկ հիմքեր ունի: ՍԱԹ-ում ազգային միասնության գիտակցությունը դեռևս խոր արմատներ չունի, որի ներդրման համար երկար ժամանակ կպահանջվի: 2005թ. սեպտեմբերի 23-ը երկրի պատմության մեջ առաջին անգամ նշվել է որպես ազգային տոն: Վերջին շրջանում սաուդյան մամուլն ավելի հաճախ է սկսել անդրադառնալ իսլամի և հայրենասիրության համակեցության հարցին:

[2] Վահաբականությունը, որպես կրոնական բարենորոգչական հոսանք, ձևավորվեց 18-րդ դարի առաջին կեսում Արաբական թերակղզու կենտրոնական շրջանում՝ Նեջդում, կրոնական քարոզիչ աստվածաբան Մուհամադ իբն Աբդ ալ-Վահաբի կողմից, որը ծայրահեղականության հասնող մաքրակրոնության կողմնակից էր: Նոր ուսմունքը կոչ էր անում վերադառնալ վաղ իսլամի ակունքներին, խստորեն հետևել միաստվածության սկզբունքներին, հրաժարվել ամեն տեսակ նորարարությունից: Վահաբականությունը ձևավորվեց սուննի իսլամի ամենաարմատական կրոնական իրավական դպրոցի՝ հանբալիականության շրջանակներում, որ դեմ է Ղուրանի ազատ մեկնությանը և իջթիհադի կիրառմանը: Վահաբականությանը հատուկ է անհանդուրժողականություն այն մահմեդականների նկատմամբ, ովքեր վահաբականության տեսանկյունից խախտել են իսլամի սկզբունքները: Այս հանգամանքը շատ դեպքերում նպաստել է հասարակական գիտակցության մեջ ծայրահեղականության դրսևորմանը: Եվրոպացի և արաբ որոշ հեղինակների աշխատանքներում վահաբականները բնութագրվել են որպես պուրիտաններ կամ իսլամի բողոքականներ: Պատմականորեն վահաբականությունը վճռորոշ դերակատարություն ունեցավ սաուդյան պետության ձևավորման հարցում, սակայն չպետք է վահաբականության արդի դրսևորումները միանշանակորեն վերագրել պաշտոնական Ռիադին:

տավարության, հրապարակայնորեն պատժել վահաբականության սոցիալական և կրոնական սկզբունքները խախտողներին[1]:

Սաուդյան Արաբիայի ներքին և արտաքին քաղաքականության մեջ բացառիկ կարևոր դերակատարություն ունի նավթային գործոնը: Արդեն Երկրորդ աշխարհամարտից ի վեր նավթային հսկայական պաշարների և դրանցից ստացված վիթխարի հասույթի շնորհիվ ՍԱԹ-ը լուրջ հաջողություններ արձանագրեց ներքին տնտեսական կյանքում, ինչպես նաև արտաքին ոլորտում՝ միևնույն ժամանակ հայտնվելով ԱՄՆ կենսական հետաքրքրությունների և քաղաքական գործընկերության ոլորտում: Այս հանգամանքը վճռորոշ նշանակություն ունեցավ, որպեսզի ԱՄՆ-ը սատարի թագավորական ընտանիքին իշխանությունն ամուր պահելու հարցում: 1960-1970-ականներից ՍԱԹ-ը, որպես իսլամի հայրենիք, աստիճանաբար սկսեց հանդես գալ արաբական իսլամական աշխարհին հուզող խնդիրները համակարգելու և իսլամի վահաբական ուղղությունը իսլամական աշխարհ արտահանելու քաղաքականությամբ[2]:

Ծոցի պատերազմը և ներքին հուզումները Սաուդյան Արաբիայում

1990-ականների սկզբին ՍԱԹ-ում ներքին ընդդիմադիր հուզումները խթանվեցին քաղաքական այն զարգացումներով, որոնք կապված էին 1990թ. օգոստոսի 2-ին Իրաքի Քուվեյթ ներխուժման հետ: Օգոստոսի 7-ին Ֆահդ թագավորը, իր պետությունը իրաքյան սպառնալիքից զերծ պահելու համար, օգնություն խնդրեց ԱՄՆ-ից: Իրաքի դեմ ռազմական գործողություններ իրականացնելու նպատակով Սաուդյան Արաբիայում ամերիկյան և դաշնակից զինված ուժերի տեղակայումը թույլատրող Գլխավոր ուլամայի խորհրդի ֆետվան հակաամերիկյան պոռթկում և վարչակարգի դեմ դժգոհություն առաջ բերեց: 1990-1991թթ. ոչ իսլամական զորքերի զանգվածային ներկայությունն իսլամի երկու սրբավայրերի երկրում նպաստեց ՍԱԹ-ում իսլամական վերածննդի տրամադրությունների ի հայտ գալուն: Երկրում ձևավորվեց իսլամական արմատական ընդդիմադիր շարժում, որի հիմնական կորիզը կրոնական դասի ներկայացուցիչներ էին: Նրանք քննադատում էին Ֆահդ թագավորի ներքին և արտաքին քաղաքականությունը, մեղադրում իշխող վարչակարգին և նրանց աջակցող կրոնական հեղինակություններին՝ ճշմարիտ իսլամից հեռանալու համար:

Այս շրջանում թե՛ կրոնական և թե՛ աշխարհիկ այլախոհները հիմնա-

[1] Country Reports on Human Rights Practices Released by the Bureau of Democracy, Human Rights and Labor, February 25, 2004, http://www.state.gov/g/drl/rls/hrrpt/2003/27937.htm

[2] Այս մասին տե՛ս Ա.Փաշայան, Վահաբական քարոզչության մի քանի դրսևորումների շուրջ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXIII, Եր., 2004, էջ 290-302:

կանում կենտրոնացան երկու երիտասարդ շեյխերի՝ Սաֆար բին Աբդ առ-Ռահման ալ-Հավալիի և Սալման բին Ֆահդ ալ-Աուդայի շուրջ: Երկրով մեկ տարածվեցին նրանց ձայնագրությունները, որտեղ արևմտյան ռազմական ուժերն անվանվում էին խաչակիրներ: Հիմնականում հիշյալ երկու շեյխերի նախաձեռնությամբ՝ 1991թ. մայիսին ուլամայի 107 ներկայացուցիչներ և համալսարանական դասախոսներ Ֆահդ թագավորին ներկայացրին մի խնդրագիր («Քիթաբ ալ-մատալիբ» վերնագրով): Նկատի առնելով այն հանգամանքը, որ երկրում իսլամական արժեքներն անտեսված են, խնդրագիրը կոչ էր անում իրականացնել մի շարք քաղաքական բարեփոխումներ, ներառյալ ուլամայից կազմված խորհրդակցական մարմնի ստեղծումը, որ կկարողանար հետևել վահաբականության տեսանկյունից հիմնավորված արտաքին քաղաքականությանը, հնարավորություն կտար թագավորական ընտանիքին չպատկանող կրթված միջին դասին՝ մասնակից դառնալ քաղաքական որոշումների ընդունմանը[1]:

Փաստորեն, Ծոցի ճգնաժամը որոշակիորեն խարխլեց սաուդական ներքաղաքական կայունությունը, ինչը վարչակարգը կարողանում էր պահել՝ դիմագրավելով նաև շիա շրջանակներից եկող մարտահրավերները[2]:

Նոր ստեղծված իրողություններն ինչ-որ չափով բացասական ազդեցություն ունեցան իսլամական աշխարհում թագավորության վարկանիշի վրա: Թագավորական ընտանիքին բարեփոխումներ անելու կոչեր արեց ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշն արդեն Ծոցի ճգնաժամից հետո[3]:

1992թ. բարեփոխումները

Ընդառաջ գնալով ներքին և արտաքին մարտահրավերներին՝ 1991թ. նոյեմբերի սկզբին Ֆահդ թագավորը հայտարարեց, որ ծրագրել է երկրում քաղաքական բարեփոխումներ իրականացնել: Մեկ տարի անց, 1992թ. մարտին նա ներկայացրեց քաղաքական բարենորոգումների մի ծրագիր: Երկրի պատմության մեջ առաջին անգամ հրապարակվեց հիմնական օրենքի նշանակություն ունեցող մի փաստաթուղթ՝ «Երկրի կառավարման համակարգը» («Ան-նիզամ աս-սիյասի լիլ-հուքմ»), որտեղ ուրվագծված են Սաուդյան Արաբիայի պետական կառուցվածքի առանձնահատկությունները: Փաստաթուղթը վերստին արձանագրում էր, որ ՍԱԹ սահմանադրությունը Ղուրանն

[1] Այս մասին տե՛ս Кепель Ж., Джихад, М., 2004, стр. 213-216.

[2] 1979թ. նոյեմբերին երկրի արևելյան նահանգներում և այլ շրջաններում սկսված կրոնաքաղաքական հուզումներում սոցիալական տարրերից մեկը շիաներն էին: 1981 և 1987թթ. Սաուդյան Արաբիայում ուխտագնացության ժամանակ բախումներ տեղի ունեցան անվտանգության մարմինների և իրանցի ուխտավորների միջև: Իրանցիներն ընդվզում էին սաուդյան դինաստիայի դեմ՝ մեղադրելով նրան իսլամի օրենքներից նահանջելու մեջ: Այս տեսակետը համահունչ էր թագավորական ընտանիքի նկատմամբ իմամ Խոմեյնիի դիրքորոշմանը:

[3] Cauthy Nugent, Reforming Saudi Arabia, 2005, March, 4, http://www.workersliberty.org/node/view/3811

է և մարգարեի սուննան, իսկ իշխանությունը պատկանում է երկրի հիմնադիր Աբդ ալ-Ազիզի որդիներին և նրանց որդիների որդիներին[1]:

1992թ. թագավորական հիշյալ հրամանագրի հիման վրա ՍԱԹ պատմության մեջ առաջին անգամ ստեղծվեց և 1993-ից սկսեց գործել խորհրդակցական մարմնի նշանակություն ունեցող ու թագավորի կողմից նշանակվող Մաջլիս աշ-շուրան՝ Շուրայի խորհուրդը, որի օրենսդիր գործառույթը խիստ սահմանափակ է[2]: Խորհրդի 60 անդամների մեծ մասը (ալիմներ, բարձրաստիճան պաշտոնյաներ, գործարարներ) սերում էր հայտնի ընտանիքներից, ծագումով՝ Նեջդից, Ալ Սաուդ ցեղի և վահաբականության բնօրրանից, ստացել էր արևմտյան կրթություն և աչքի էր ընկնում ոչ արմատական, չափավոր կեցվածքով[3]: Բնական է, նրանք արտահայտելու էին իշխող ընտանիքի շահերը: Բացի այդ, 1992թ. թագավորական հրամանագրի հիման վրա ձևավորվեցին Նախարարների խորհուրդը և Նահանգների խորհուրդը: Սահմանադրական այս ակտերը նշանակում էին, որ էմիր Աբդալահն իսկապես մտադիր էր երկրի կառավարման մեջ ներգրավել միջին դասի կրթյալ մի շերտի[4]:

«Ալ-Կաիդան»՝ թագավորական ընտանիքի ընդդիմախոս

Ծոցի պատերազմից ի վեր վարչակարգի համար լուրջ վտանգ սկսեցին ներկայացնել նաև աֆղանական ջիհադի սաուդցի վետերանները՝ ի դեմ Ուսամա բին Լադենի, որոնք պահանջում էին անմիջապես իսլամի հայրենիքից դուրս բերել ամերիկյան ռազմական ուժերը: 1994թ. սաուդական քաղաքացիությունից զրկվելուց և Սուդանում հաստատվելուց հետո բին Լադենը շարունակում էր պայքարն իշխող ընտանիքի դեմ: Թագավորությունում մի շարք ահաբեկչական գործողություններ իրականացնելուց հետո, 1997թ. օգոստոսին, բին Լադենը հրապարակեց «Պատերազմի հռչակագիրը»՝ ուղղված ԱՄՆ և սաուդական ընտանիքի դեմ: Իսլամական սկզբնաղբյուրներից բերված մեջբերումներով հարուստ տեքստում «Ալ-Կաիդայի» առաջնորդը զայրույթով էր խոսում ամերիկյան «խաչակիրների» կողմից երկու սրբավայրերի երկիրը «գրավելու» մասին: 1998թ. օգոստոսի

[1] Основные системы власти Королевства Саудовская Аравия (1992г.), глава VI, Государственная власть, статья XXXXIV, в кн. Александров И. А., Монархии Персидского залива. Этап Модернизации, М., 2000, стр. 464-479.

[2] Այս կառույցը ռուսաստանցի հետազոտող Գ.Կոսաչն անվանում է «պրոտոպառլամենտ»: Տե՛ս Г.Г. Косач, Саудовская Аравия: реформы и стабильность, «Россия в глобальной политике», N. 5, Сентябрь-октябрь, 2005.

[3] Кепель Ж., նշվ. աշխ., էջ 214:

[4] Ցեղային հասարակություն ներկայացնող Սաուդյան Արաբիայի արդիականացման տեսանկյունից խիստ կարևոր է միջին դասը: Այն ձևավորվել է 1960-ականներից ի վեր, որի ներկայացուցիչները հիմնականում գործարարներ, համալսարան ավարտած մասնագետներ, համալսարանական դասախոսներ, ինչպես նաև բյուրոկրատիայի ներկայացուցիչներ են:

7-ին բին Լադենը ՍԱԹ-ում ամերիկյան ռազմական ուժերի հաստատվելու ութերորդ տարելիցի կապակցությամբ ահաբեկչական գործողություններ իրականացրեց Քենիայի և Տանզանիայի ԱՄՆ դեսպանատների դեմ:

2001թ. սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ում տեղի ունեցած ահաբեկչությանը մասնակից 19 անձնասպան ահաբեկիչներից 15-ը սաուդցի էին: Փաստորեն, սաուդական արմատական ռեսուրսը թագավորության սահմաններից դուրս փորձում էր իրականացնել ջիհադի գաղափարները՝ շարունակելով պայքարել նաև «ներքին թշնամու» դեմ: Առկա տեղեկությունների համաձայն՝ 2003թ. մայիսի 12-ին և նոյեմբերի 9-ին «Ալ-Կաիդան» Սաուդյան Արաբիայում կազմակերպեց լայնամասշտաբ ահաբեկչություններ, որոնց զոհ գնացին նաև օտարերկրացիներ, այդ թվում՝ ԱՄՆ քաղաքացիներ:

Սեպտեմբերի 11-ից հետո միջազգային ահաբեկչության դեմ պայքարի շրջանակներում պարզ դարձավ, որ ահաբեկչության տարածմանը և ֆինանսավորմանը մեծապես նպաստել են աշխարհով մեկ սփռված սաուդական բարեգործական և քարոզչական մի շարք հաստատություններ, առավել հաճախ՝ դրանց մասնաճյուղերը: Նշվեց, որ վահաբականությունը փորձել է կենսունակ պահել ռազմական ջիհադի հայեցակարգը: Սակայն այսօր նույն թագավորական ընտանիքը ԱՄՆ-ի հետ միասին ահաբեկչության դեմ պայքարի շրջանակներում հետևողականորեն պայքարում է ոչ միայն ջիհադականների (մասնավորապես՝ «Ալ-Կաիդայի» դեմ, որի կայացման գործում մեծ դերակատարում ունեն թե՛ սաուդական, թե՛ ԱՄՆ հատուկ ծառայությունները), այլև սեփական երկրում խոր արմատներ ունեցող կրոնական մոլեռանդության դեմ: 2004-ի կեսերին հազարից ավելի կղերական պաշտոնյաներ (իմամներ, խատիբներ, մոլլաներ) հեռացվել են իրենց պարտականություններից և պետք է նորից վերապատրաստվեն: Կրոնական հանդուրժողականությունն արմատավորելու համար իրականացվում են տարբեր միջոցառումներ[1]:

Բարենորոգչական շարժումը 2003-2004թթ.

Կարևոր է արձանագրել այն իրողությունը, որ աստիճանաբար թագավորությունում ի հայտ եկավ այլախոհության մեկ այլ աղբյուր, որի արժեքային համակարգը հենվում էր սալաֆիականության վրա[2]: Դրա շրջանակներում են գործում իսլամական չափավորները, որոնք թագավորությու-

[1] Հիշյալ թեմայի վերաբերյալ ինտերնետային կայքերում երիտասարդների հետ բանավեճեր են անցկացվում: Բջջային հեռախոսներ ունեցողները հաճախ են ահաբեկչությունը դատապարտող հաղորդագրություններ ստանում:

[2] Արաբերեն *սալաֆ* նշանակում է նախահայր, նախորդ: Սալաֆիականները կրոնական այն գործիչներն են, ովքեր իսլամի պատմության տարբեր ժամանակահատվածներում կոչ են արել հետևել վաղ իսլամի սկզբունքներին, այսինքն՝ բարեպաշտ նախահայրերի (աս-սալաֆ աս-սալիհուն) դավանանքին:

նում իսլամական ազատական և բարենորոգչական շարժման առաջատարներն են և կողմ են միապետական կարգերի պահպանմանն ու խաղաղ ճանապարհով բարենորոգումների իրականացմանը: Նրանց կարծիքով՝ իսլամն անհամատեղելի չէ արդիականության, առավել ևս՝ ժողովրդավարական արժեքների հետ: Արևմուտքի նկատմամբ նրանց մոտեցումները, ի տարբերություն ջիհադականների, պայմանավորված են ոչ թե գաղափարախոսական, այլ քաղաքական հիմքերով: Իսլամական ազատականներն առաջիններից էին, որ սկսեցին քննադատել վահաբականությունը: Իրենց հարցադրումները տեղադրելով կրոնական-քաղաքական նոր հարթությունում՝ նրանք բազմաթիվ շիա բարենորոգիչների հետ միասին կարողացան ստեղծել իսլամական սկզբունքների վրա խարսխված քաղաքական նոր պլատֆորմ[1]:

2003 և 2004թթ. իրավամբ կարելի է համարել Սաուդյան Արաբիայում իսլամական ազատական և բարենորոգչական շարժման վերելքի շրջան, որը նշանավորվեց հրապարակային ելույթներով, բողոքի ակցիաներով, բազմաթիվ խնդրագրերով, սոցիալ-քաղաքական բարեփոխումների մի շարք պահանջներով, ինչն անվտանգության մարմինների կողմից շատ դեպքերում ուղեկցվեց բռնություններով, ձերբակալություններով, հալածանքներով: Բարենորոգիչները կոչ էին անում երկրում մտցնել համընտրական իրավունք, ստեղծել սահմանադրություն, ընտրովի խորհրդարան, անկախ դատական համակարգ, պայքարել կոռուպցիայի դեմ, վերանայել մարդու իրավունքների, խոսքի ազատության, ինչպես նաև՝ կրոնական, տեղային և սոցիալական խտրականությունների ու դրանց առնչվող այլ հարցեր[2]:

Բարենորոգումների կողմնակիցների կարծիքով՝ շուտափույթ բարենորոգումների ճանապարհով միայն կարելի էր երկրում խուսափել բռնության, անկայունության և ազգային տարանջատվածության վտանգից: Բացի այդ, նրանք առաջարկում էին քաղաքական որոշումների ընդունմանը մասնակից դարձնել հասարակության բոլոր շերտերին, քննարկման խնդիր դարձնել սաուդական հասարակությունում առկա արմատականության և ծայրահեղականության տարբեր կողմերը, պատճառներն ու հետևանքները, մշակել դրանց հետագա կանխմանն ուղղված քայլերը: Այդ իսկ պատճառով առաջարկվում էր, առաջին հերթին, բարեփոխել ու արդիականացնել սաուդական կրթական, սոցիալական և կրոնական համակարգերը:

2003թ. մայիսի 17-ին, ելույթ ունենալով Շուրայի խորհրդում, Ֆահդ թագավորը հայտարարեց, որ Սաուդյան Արաբիան ընթանում է բարենորոգումների ճանապարհով: Նա նշեց, որ իրենք պատրաստվում են մեծացնել ժողովրդի մասնակցությունը կառավարման գործերում՝ ավելի մեծ

[1] Stephane Locroix, Between Islamists and Liberals: Saudi Arabia's New «Islamo-Liberal» Reformists, Middle East Journal, vol. 58, N.3, Summer, 2004, p. 346.
[2] Նույն տեղում:

հեռանկարներ բացելով կանանց համար, որոնք պետք է մասնակից դառնան ապագայի կերտմանը[1]:

2003թ. օգոստոսի սկզբին թագավորական հրամանով ստեղծվեց Աբդ ալ-Ազիզ թագավորի Ազգային երկխոսության կենտրոնը, որի նպատակն էր սաուդական հասարակությանն առնչվող խնդիրների շուրջ բանավեճեր կազմակերպել: Թագաժառանգ Աբդալահի կարծիքով՝ կենտրոնի բացումը պատմական ձեռքբերում էր, որն աջակցելու էր երկրում ծայրահեղականության և մոլեռանդության դեմ պայքարին[2]:

Իսլամական ազատական շարժման կարևոր ձեռքբերումներից մեկն այն էր, որ հասարակությունն ինչ-որ չափով հնարավորություն ստացավ խոսել նախկինում արգելված և սաուդական հասարակության տեսանկյունից հրատապ թվացող հիմնահարցերի մասին թե՛ մամուլով, թե՛ հրապարակայնորեն: Ազատական գաղափարների տարածման հարցում ոչ պակաս կարևոր և դրական նշանակություն ունեցավ սաուդական մամուլը, որը հնարավորինս արձագանքեց ժամանակի հրամայականով թելադրված խնդիրներին:

2004թ. վերջին իսլամական ազատական շարժումը որոշ չափով կորցրեց նախկին թափը, շարժման բազմաթիվ ակտիվիստներ հալածանքների ենթարկվեցին: Ընդդիմությանն ամեն կերպ զսպելու որոշումն ամրագրվեց 2004թ. աշնանը հրապարակված թագավորական օրենքով, որն արգելում է պետական ծառայողներին ստորագրել որևէ բողոքարկման տակ կամ հրապարակայնորեն քննադատել իշխող ընտանիքին[3]: Իշխանությունների ինքնավստահ քայլերը կապված էին մի կողմից՝ 2004-ից նավթի գների խիստ բարձրացման, մյուս կողմից՝ «Ալ-Կաիդայի» դեմ հաջողված պայքարի հետ:

Ընդդիմադիր շարժումները դիմագրավելու հարցում թագավորական ընտանիքի համար շարունակում են լուրջ հենարան մնալ իսլամական պահպանողական շրջանակները՝ հանձինս վահաբական ուլամայի (որը դեմ է ազատական բարեփոխումներին՝ դրանք դիտարկելով սպառնալիք վահաբականության և սեփական դիրքերի համար), ինչպես նաև միջին դասից սերած պահպանողականների մի շերտի (որ ներգրավված է հիմնականում վարչարարական մեքենայում և գործարարության մեջ): Հենվելով այս շրջանակների վրա՝ վարչակարգը 2005թ. Սաուդյան Արաբիայի պատմության մեջ առաջին անգամ անցկացրեց տեղական ինքնակառավարման խորհուրդների ընտրություններ:

[1] Աշ-շարկ ալ-աուսատ, 18. 05.2003, http://asharqalawsat.com

[2] Saudi Arabia to establish a National Dialogue Center, http://www.islamonline.net/English/News/2003-08/04/article08.shtml

[3] Սա մարտավարական քայլ էր, քանի որ պետական ծառայողներ են համարվում նաև բարեփոխումների կողմնակից բազմաթիվ գիտնականներ (որ աշխատում են պետական կրթական հաստատություններում, գիտահետազոտական կենտրոններում), ինչպես նաև լրագրողները, որոնք աշխատում են պետական թերթերի, ամսագրերի խմբագրություններում և լրատվական գործակալություններում:

2005թ. տեղական ինքնակառավարման ընտրությունները

Ընտրություններն անցկացվեցին երեք փուլով. Ռիադում և նրա շրջակայքում՝ 2005թ. փետրվարի 10-ին, երկրի արևելյան և արևմտյան նահանգներում՝ մարտի 3-ին և հյուսիսային նահանգներում՝ ապրիլի 21-ին: Ընտրություններից առաջ ձևավորվեցին դաշինքներ և խմբակցություններ, որոնք հասարակական շարժման շրջանակներում ընտրապայքար ծավալեցին: Նախադեպը չունեցող ընտրություններն ընթացան նաև «ոչ մաքուր» տեխնոլոգիաներով: Ընտրարշավի ընթացքում սաուդական մամուլում հայտնվեցին հաղորդումներ այն մասին, որ որոշ թեկնածուներ «համեստ» գումարներ են բաժանում ուսանողներին՝ նրանց աջակցությունն ստանալու ակնկալիքով:

Իրենց թեկնածությունը կարող էին առաջադրել 25 տարին լրացած Սաուդյան Արաբիայի քաղաքացիներ կամ արաբական ծագումով և տասը տարուց ավելի սաուդական քաղաքացիություն ունեցողներ, որոնք չպետք է նախկինում դատված կամ էլ վտարված լինեին պետական ծառայությունից: Ընտրելու իրավունք ունեին 21 տարին լրացած ոչ զինվորական քաղաքացիներ, որոնք պետք է քվեարկեին իրենց մշտական բնակավայրում[1]:

Ընտրություններին հաղթանակ տարան հիմնականում իսլամական չափավոր կեցվածք ունեցող և վահաբական ուլամայի կողմից հովանավորվող միջին դասի, հիմնականում՝ արևմտյան կրթություն ստացած, ներկայացուցիչները, որոնք աջակցում են թագավորական ընտանիքին, դեմ են ազատական բարեփոխումներին, միևնույն ժամանակ, ձգտում են երկիրը հեռու պահել իսլամիստական շարժումներից և, ի վերջո, մասնակից դառնալ գործադիրի աշխատանքներին:

178 խորհուրդներում անցկացված ընտրությունները խոցելի էին մի շարք առումներով: Ընտրապայքարին որևէ քաղաքական ուժ կամ կուսակցություն չէր մասնակցում, կանանց արգելված էր առաջադրվել և քվեարկել, խորհուրդների տեղերի կեսը նշանակվել է թագավորի կողմից: Ցածր էր մասնակցության ցուցանիշը, որ մատնանշում է, թե ընտրությունները ոգևորություն չէին առաջացրել հասարակության լայն շրջանակներում: Բացի այդ, տեղական խորհուրդները որոշում ընդունելու տեսանկյունից շատ սահմանափակ են: Սա է պատճառը, որ իսլամական բարենորոգիչները համոզված են, որ տեղական ընտրությունները չեն կարող վճռորոշ նշանակություն ունենալ բարեփոխումների գործընթացում:

[1] Այս մասին տե՛ս Г.Г. Косач, Реформы в Саудовской Аравии: муниципальные выборы, http://www.iimes.ru, նաև՝ Մուհամադ ալ-Մուսլիմի, Տեղական ինքնակառավարման ընտրությունները Սաուդյան Արաբիայում, «Ան-նուր», # 6, Լոնդոն, 2005, էջ 23-25 (արաբերեն):

Եզրակացություններ

Փաստորեն, Սաուդյան Արաբիայում չկա արևմտյան ժողովրդավարության կամ աշխարհիկ հասարակության որևէ փորձ, իսկ ազատական (առավել ևս՝ աշխարհիկ) գաղափարները հասարակության մեջ այդքան էլ զանգվածային բնույթ չեն կրում: Սաուդյան Արաբիայի ժողովրդավարացման[1] հարցում կարևոր գործոն է սաուդական հասարակությունը, որը պահպանողական և ավանդութային է: Այս երկրում հնարավոր խորհրդարանական ընտրությունների դեպքում կարող է հաղթանակ տանեն ոչ թե իսլամական ազատականները, այլ ցեղային առաջնորդները կամ իսլամիստները: Այս պարագայում, իսլամական ազատականների համար դժվար կլինի պայքարել կրոնական արմատականության, պահպանողականության, ինչպես նաև վահաբականության դեմ, որը խոր արմատներ ունի հասարակական գիտակցության մեջ:

Իսլամական ազատականներին անհանգստացնում է այն փաստը, որ բարեփոխումների հարցում կարող է բացասական նշանակություն ունենալ նաև ԱՄՆ գործոնը: Փաստ է, որ Վաշինգտոնն արևմտյան արժեքների և ժողովրդավարության ներդրման ու միասեռ հասարակությունների ստեղծման գլոբալ քաղաքականության շրջանակներում Ռիադից պահանջում է բարեփոխումներ անցկացնել երկրում, ինչպես նաև պայքարել իսլամական ահաբեկչության դեմ: Հնարավոր է, որ ԱՄՆ-ի նկատմամբ իսլամական հասարակությունների ավանդական անտագոնիզմի, ինչպես նաև ԱՄՆ սանձազերծած իրաքյան պատերազմի արդյունքում՝ սաուդցիները բարենորոգումները դիտարկեն իբրև ԱՄՆ-ի կողմից ներդրված և չաջակցեն դրանց: Այս իրողությունը կարող է հետաձգել կամ ընդհանրապես անհաջողության մատնել բարենորոգումների գործընթացը:

Ամեն պարագայում կարելի է ասել, որ իսլամական բարենորոգչական շարժումը տեսանելի հաջողությունների հասավ Սաուդյան Արաբիայի պես պահպանողական երկրում, չնայած խոսքի ազատության, մարդու իրավունքների, կրոնադավանական փոքրամասնությունների[2] նկատմամբ շարունակվող սահմանափակումներին: Սաուդական ընտրանին հազիվ թե ընդառաջ գնար սահմանափակ բարենորոգչական նախաձեռնությունների (խոսքի սահմանափակ ազատություն, քաղաքական բանավեճի ծավալում,

[1] Այս տեսանկյունից ուշագրավ է Սաուդյան Արաբիայում ցեղային դեմոկրատիայի գործառույթը, որը, հենվելով ավանդույթի վրա, փորձում է ուղիղ կապ ստեղծել կառավարողի և նրա սուբյեկտների միջև՝ առաջնորդվելով իսլամական խորհրդակցության սկզբունքով: Թագավորությունում ավագ էմիրները (ներառյալ թագաժառանգը) լսարան են տրամադրում սաուդցի քաղաքացիներին՝ ընդառաջ գնալով նրանց բողոքներին ու առաջարկներին:

[2] Այս տեսանկյունից խոցելի են Սաուդյան Արաբիայի ոչ զարգացած արևելյան նահանգներում ապրող շիաները, որոնք թագավորությունում տնականորեն ենթարկվել են սոցիալական և կրոնական խտրականությունների:

տեղական ինքնակառավարման ընտրություններ, քաղբանտարկյալների մի մասի ազատ արձակում և այլն), եթե չլինեին ներքին ճնշումներն իշխող ընտանիքի վրա: Սաուդական հասարակական-քաղաքական համակարգի արդիականացման տեսանկյունից հիշյալ ձեռքբերումները մի քայլ են այս ոլորտում ավելի լուրջ բարեփոխումների ճանապարհին:

Հարկ է նշել, որ ազատական շարժման հետագա հաջողությունը կախված է բարենորոգումների հարցում թագավորական ընտանիքի դիրքորոշումից: Բարենորոգիչները որոշակի ակնկալիքներ ունեն Աբդալահ թագավորից, որն էապես աջակցել է բարենորոգչական շարժմանը: Արդյոք Աբդալահ թագավորն այսուհետև նույնպես ընդառաջ կգնա՞ ներքին մարտահրավերներին՝ դժվար է ասել, սակայն փաստ է, որ այսօր թագավորական ընտանիքում շատերն են խոսում բարեփոխումների օգտին: Չի բացառվում, որ առաջիկայում սկսվեն սահմանադրության, օրենսդիր մարմնի ստեղծման և ընտրական իրավունքի ներդրմանն առնչվող հարցերի քննարկումներ: Իշխող վարչակարգի տեսանկյունից ջիհադականների և կրոնական մոլեռանդ գաղափարների դեմ պայքարի հաջողությունը, ինչպես նաև սեփական իշխանության պահպանումը (թեկուզ ինչ-որ չափով ձևափոխված տարբերակով) շատ դեպքերում կախված է հասարակական-քաղաքական կյանքում իսլամական ազատականացման առավել ներգրավումից:

Այսպիսով, 1990-2005թթ. Սաուդյան Արաբիայում տեղի ունեցած հասարակական-քաղաքական զարգացումները պայմանավորված էին ինչպես արտաքին, այնպես էլ ներքին քաղաքական գործոններով: Ծոցի պատերազմից հետո, ընդառաջ գնալով ներքին մարտահրավերներին, 1992թ. թագավորական ընտանիքն իրականացրեց որոշ սահմանափակ բարեփոխումներ, որոնցից առավել կարևոր են հիմնական օրենքի նշանակություն ունեցող փաստաթուղթը և Շուրայի խորհրդի ստեղծումը: Ռեֆորմիստական շարժումը Սաուդյան Արաբիայում գագաթնակետին հասավ 2003-2004թթ., որ նշանավորվեց հրապարակային ելույթներով, բողոքի ակցիաներով, բազմաթիվ հանրագրերով, սոցիալ-քաղաքական ռեֆորմների մի շարք պահանջներով (համընտրական իրավունքի և սահմանադրության ընդունում, մարդու իրավունքների պաշտպանություն և այլն): Ռեֆորմիստական շարժմանը հաջողվեց սահմանափակ հաջողություններ արձանագրել, որոնք են՝ խոսքի սահմանափակ ազատություն, քաղաքական դիսկուրսի ծավալում, մունիցիպալ ընտրություններ և այլն: Այնպիսի պահպանողական երկրի համար, ինչպիսին Սաուդյան Արաբիան է, հիշյալ ռեֆորմները նոր փուլ են հասարակական-քաղաքական մոդեռնացման ճանապարհին: